**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/34680-2025

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1155-26.09.2025-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 962 - Ա որոշումը:

Հարգանքով՝

**ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչություն
Հեռ. 515403
Էլ փոստ՝ agnesa.arakelyan@gov.am

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

## ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը սկզբունքային առարկություններ չունի:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված լրացման ձևակերպումից պարզ չէ, թե ում հիշատակին է նշված օրը նվիրված, ինչպես նաև Նախագծի հիմնավորման համաձայն՝ Նախագծի նպատակն է բոլոր ժամանակների ռազմական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների և այլ անձանց հիշատակը հարգելը, առաջարկում ենք Նախագծով նոր լրացվող օրենքի Հոդված 1.2-ը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 1.2. Հանուն հայրենիքի զոհվածների հիշատակի և խոնարհումի օր՝ նշվում է հունվարի 27-ին, ոչ աշխատանքային օր:»:

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-1155-26.09.2025-ՊԻ-011/0*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.2-րդ հոդվածով.

«Հոդված 1.2. Հիշատակի եւ խոնարհումի օր՝ նշվում է հունվարի 27-ին, ոչ աշխատանքային օր:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում չկա հատուկ օր, որը նվիրված է բոլոր ժամանակների ռազմական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների եւ այլ անձանց հիշատակը հարգելուն եւ մեծարելուն: Հետեւաբար մարդիկ զոհվածների հիշատակը հարգում են կա՛մ տարբեր ռազմական իրադարձությունների նշման, կա՛մ հունվարի 28-ին՝ Բանակի օրը, որն ավելի շատ տոնական օր է, քան հիշատակի:

Հիշատակի եւ խոնարհումի օր սահմանելու շնորհիվ Բանակի օրվան՝ հունվարի 28-ին նախորդող օրը՝ հունվարի 27-ը, կդառնա օր, երբ կհարգեն բոլոր ժամանակների ռազմական գործողությունների ժամանակ զոհվածների հիշատակը եւ կխոնարհվեն հայրենիքի համար ընկածների հիշատակի առջեւ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքում լրացում կատարել եւ սահմանել Հիշատակի եւ խոնարհումի օր՝ ոչ աշխատանքային:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով նախատեսվում է վերանայել «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքը եւ հունվարի 27-ը սահմանել որպես Հիշատակի եւ խոնարհումի օր՝ ոչ աշխատանքային:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ հունվարի 27-ը ՀՀ-ում պաշտոնապես կնշվի որպես Հիշատակի եւ խոնարհումի օր, կստեղծվեն իրավական հիմքեր բոլոր ժամանակների ռազմական գործողությունների ընթացքում զոհվածների հիշատակը հարգելու եւ հայրենիքի համար ընկածների հիշատակի առջեւ խոնարհվելու ուղղությամբ միջոցառումներ ու ծրագրեր մշակելու եւ իրականացնելու, այդ նպատակով պետական եւ

հասարակական հատվածի համագործակցությունը, ինչպես նաեւ հանրային կրթության ծրագրերը խթանելու համար:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 962 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Դադունցին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-1155-26.09.2025-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ